V–VI ԴԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԱՐԱՏԻ ԼԱՆՋԻՆ

ՎԱՀԱԳՆ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2004 թ. օգոստոսին Արարատի հյուսիսարևմտյան լանջին[1] նկարահանվեցին մի եկեղեցու ավերակներ[2]: Մոտակայքում տեղադրված է թուրքական բանակի ուղեկալ. օտարերկրացիների համար տարածքը փակ է և խստագույնս վերահսկվում է: Մոտ 1 կմ հեռավորության վրա՝ լեռան կանաչապատ լանջի զառիթափի ստորոտում, գտնվում են գառնարած քրդերի վրանները, որոնց հոտերը, սակայն, տարվա այդ ժամանակ տեղաշարժվում են 3000 մ և ավելի բարձրության վրա: Այսպիսով, բացի թուրք զինվորականներից և տեղաբնակ քրդերից, այլոց համար տեղանքը գործնականում հասանելի չէ:

Եկեղեցու ավերակները (նկ. 1, 2, 3) գտնվում են հարթ կանաչապատ տարածքում, սահմանափակված հարավից զառիթափով, որ աստիճանաբար վերածվում է լեռան արևմտյան լանջի ժայռոտ լեզվակի՝ թփերով պատված, հյուսիսից՝ մի բլրով, որի գագաթին գտնվում են բերդի, իսկ հարավային և հատկապես արևելյան լանջերին՝ բնակավայրերի ավերակներ: Բերդի արևմտյան պատաշարի մի փոքր հատվածն է համեմատաբար պահպանվել, իսկ բերդի կենտրոնական մասում կա շաղախով խնամքով մշակված պատերով հոր (նկ. 4): Եկեղեցու և բերդի բլուրն առանձնանում են լեռան լանջի երկայնքով ձգվող ճանապարհով: Եկեղեցու ավերակները խոտակալած են ոչ միայն դրսից, այլ նաև՝ ներսից, այնպես որ եկեղեցու շքամուտքի, պատերի ստորին շարքերի մանրամասները դժվար նկատելի են: Բեկորների կուտակումը դժվարացնում է նաև որոշակի եզրակացություն անել հատակագծի վերաբերյալ: Քարը նարնջագույն երանգով տուֆ է, որ, ի դեպ, միանգամայն տարբերվում է մոտակա բերդի քարատեսակից՝ գորշ բազալտից: Աչքի է զարնում, որ ավերակների հսկա բեկորներ՝ հարթ պատերի զգալի հատվածներ, ընկած են եկեղեցուց մեկուսի, մինչև 5–8 մ հեռավորության վրա, շրջված, ասես ուժգնորեն նետված, և ոչ բնավ աստիճանաբար քանդված: Տպավորությունն այն է, որ ուժգին երկրաշարժը կարող է հանգեցնել նման

---

[1] *Վահագն Գուրզադյանը Սվիր Սարսեթի (Քեմբրիջի համալսարան) ընկերակցությամբ օգոստոսի 7–10-ը գտնվում էր այդ տարածքում՝ անսպասելիորեն մուտքի բացառիկ արտոնություն ստանալով տեղի իշխանություններից: Օգոստոսի 10-ին Վահագն Գուրզադյանը հասավ Արարատի գագաթը, տեղաբնակ քուրդ ուղեկցորդի հետ (Սարսեթը մնաց 3850 մ բարձրության վրա)՝ կրկնելով Պարրոտ-Աբովյան անդրանիկ վերելքի (1829 թ.) ուղին:*

[2] *Նկարագրությունը և լուսանկարները՝ Վահագն Գուրզադյանի, իսկ հուշարձանի բնութագրումը և ժամանակի թվագրումը՝ Վարազդատ Հարությունյանի:*

պատկերի, առավել ևս, երբ կա նախադեպը. նկատի ունենք Ակոռիի 1840 թ. երկրաշարժի փաստը: Պատերից առավել կանգուն է արևելյան կիսակլոր աբսիդը: Հպանցիկ արտաքին զննումով արձանագրություններ կամ զարդաքանդակներ չեն երևում, սակայն հնարավոր է, որ դրանք լինեն գետնին բազմաթիվ սրբատաշ քարերի խոտակալած կուտակումներում: Պատերի վրա կան ներկով մերօրյա գրառումների հետքեր:

Եկեղեցին գտնվում է ծովի մակարդակից 2100 մ բարձրության վրա (ունեինք բարձրաչափ և GPS *– Վ. Գ.), և այսպիսով, հայտնի առավել բարձրադիր տեղադրված հայկական եկեղեցիներից է: Եկեղեցու մասին, սակայն, տեղեկություններ չեն տալիս ստորև բերվող աղբյուրները: Կունեոյի*[3] *հանրագիտարանային մենագրությունը նշում է հուշարձանի գոյություն Կորիան տեղանքում, սակայն ի տարբերություն շրջակա այլ հուշարձանների (Զոր*[4]*, Ակոռի), համարակալված չէ, և, հետևաբար, պարզ չէ, թե այն վերաբերում է բերդին, եկեղեցուն, թե որևէ այլ հուշարձանի: Ալիշանի «Այրարատում»*[5] *բերված է «Ղորղան կամ Գուրղան» տեղանունը, սակայն դարձյալ չկա հիշատակություն եկեղեցու մասին: Հիշատակություն չկա նաև Ֆ. Պարրոտի՝ Արարատի վերելքի (այդ թվում՝ Ակոռիի Սբ. Հակոբ վանքի) մանրամասն նկարագրության մեջ*[6]*, որը, թերևս, բացատրելի է, քանի որ նրանք լեռանը մոտեցել են Ակոռիից և ոչ թե արևմուտքից:*

Նշենք, որ այս եկեղեցուց 20 կմ հյուսիս՝ Արաքսի մոտակայքում, գտնվում է Յոլակերտը՝ հայկական քրիստոնեական ամենավաղ՝ IV–V դդ.[7] *հուշարձաններից մեկը:*

Տպավորությունն այն է, որ կառույցը իրականացված մեծաչափ սրբատաշ կարմրագույն քարերով, հայկական վաղ միջնադարյան (V–VI դդ.) միանավ բազիլիկ է՝ արևելյան կողմից աբսիդով: Այն խիստ ավերակ վիճակում է:

Նկ. 1. Եկեղեցու արևելյան աբսիդը ներսից:

Նկ. 2. Հյուսիսային պատի մի հատված:

[3] P. C u n e o. Architettura Armena. Roma, De Luca Editore, 1988.

[4] А. К а л а н т а р. Зорская базилика и развалины древнего Карван-сарая.– “Христианский Восток”, т. III, вып. 1, 1914, с. 101; A. K a l a n t a r. Armenia: From the Stone Age to the Middle Ages, Civilisations du Proche-Orient. Paris, 1994, p. 70-74.

[5] *Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 487, 489:*

[6] F. P a r r o t. Reise zum Ararat, Brockhaus. Leipzig, 1985.

[7] P. C u n e o. *Նշվ. աշխ., էջ 628:*

Նկ. 3 Ավերակների տեսքը արևմուտքից:

Նկ. 4 Բերդի արևմտյան պատի մի հատված. Երևում է Արարատի գագաթը:

АРМЯНСКАЯ БАЗИЛИКА V-VI вв. НА СКЛОНЕ АРАРАТА

ВААГН ГУРЗАДЯН, ВАРАЗДАТ АРУТЮНЯН

Р е з ю м е

В августе 2004 г. во время восхождения на Арарат по маршруту первовосходителей Паррота и Абовяна (1829 г.) В. Гурзадяном были сфотографированы развалины церкви (фото 1-3), находящейся на высоте 2100 м на северо-западном склоне горы Арарат. Церковь расположена в милитаризованной, строго охраняемой зоне, практически недоступной для иностранцев, куда В. Гурзадян (со спутником С. Аарсетом из Кембриджа) неожиданно получил особое разрешение. Недалеко от церкви, на вершине холма находятся развалины крепости (фото 4), а на склонах холма–развалины жилищ. Церковь построена из крупных блоков оранжеватого туфа. Сохранились остатки восточной абсиды церкви. Бросается в глаза, что отдельные крупные участки стен лежат на расстоянии 5-8 м от церкви, подчас в перевернутом положении, как бы выброшенные в результате сильного землетрясения. О существовании церкви нет информации ни в энциклопедической монографии Кунео, ни у Алишана – “Айрарат”, ни в описании Паррота о восхождении на Арарат. Согласно В. Арутюняну, это развалины армянской церкви раннехристианского периода, V-VI вв., однонефная базилика. Таким образом, эта одна из наиболее высоко расположенных армянских церквей, известных на сегодняшний день.

ARMENIAN 5th-6th CENTURY BASILICA CHURCH ON THE SLOPE OF ARARAT

VAHAGN GURZADYAN, VARAZDAT HARUTYUNYAN

S u m m a r y

In August 2004 while climbing Mt. Ararat by the route of the first-climbers Parrot and Abovian (1829), V. Gurzadyan took photos of a ruined church (photos 1-3 and others not represented here) situated at an altitude of 2100m in the north-west slope of the mountain. The church is located in militarized, carefully controlled zone, practically non-reachable for foreigners, where V. Gurzadyan (together with S.Aarseth of Cambridge) was granted unexpected exclusive entry permission. Ruins of a fortress (photo 4) are situated on the top of a nearby hill, while ruins of dwellings cover the latter's slopes. The church is constructed of large blocks of orange tuff. Its eastern abside has survived better. It is remarkable that large, separate pieces of the walls, occasionally upside down, are situated in 5-8m from the church, apparently as a result of a powerful earthquake. No information on this church exists either in the encyclopedic monograph by Cuneo (footnote [3] in the text), or in Alishan's "Ayrarat" [5], as well as in Parrot's [6] description of the trip to Ararat. According to V. Harutyunyan, these are ruins of an Armenian early-Christian, 5th-6th century church, one-nef basilica. Thus, this is one of the highest altitude (above sea level) situated churches among Armenian churches known up to now.